ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Խաչպար ՍՊԸ-ն ՅԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/64 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	ֆիրմային անվանումը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
2	Բինար Օքսի 1լ	Ինտերսեն պլյուս	«ԲԻՆԱՐ օքսի» ախտահանիչ միջոցը իրենից ներկայացնում է թափանցիկ կամ թույլ օպալեսցենտող, յուրահատուկ հոտով համասեռ հեղուկ: Որպես ազդող նյութեր՝ պարունակում է. ջրածնի պերօքսիդ՝ 9,0%, ալկիլդիմեթիլբենզիլ ամոնիումի քլորիդ՝ 4,0%, պոլիհեքսամեթիլեն բիգուանիդ հիդրոքլորիդ՝ 2,0%, ինչպես նաև մաքրված ջուր և ֆունկցիոնալ բաղադրիչներ, ներառյալ ոչ իոնոգեն մակերեսային ակտիվ նյութեր և կոռոզիայի ինհիբիտոր: Միջոցի pH-ը՝ 5,0 միավոր է: Միջոցի պիտանելիության ժամկետը արտադրողի բնօրինակ փակ փաթեթավորմամբ 2 տարի է՝ պահման և տեղափոխման պայմանները պահպանելու դեպքում, աշխատանքային լուծույթներինը՝ 30 օր՝ պատրաստման պահից սկսած, ջրի որակին և ջերմաստիճանին ներկայացվող պահանջները պահպանելու դեպքում: Ունի աշխատանքային լուծույթի մեջ ակտիվ նյութի արագ ստուգման համար զգայորոշիչ Թեստ-երիզներ: Միջոցն օժտված է հակամանրէային ակտիվությամբ, այդ թվում մանրէասպան հատկություններով գրամբացասական և գրամդրական

			մանրէների նկատմամբ (ներառյալ տուբերկուլոզի՝ թեստավորված Մ. Տերրայի (M.terrae) վրա, բժշկական միջամտությամբ պայմանավորված վարակների՝ թեստավորված Պ. Աերուգինոսայի (P.aeruginosa) վրա, անաէրոբ վարակների՝ թեստավորված Կ. Դիֆիսիլեի (C.difficile) վրա, հատուկ վտանգավոր և կարանտինային վարակների (ժանտախտ, խոլերա, տուլարեմիա, սիբիրյան խոց), լեգիոնելոզի հարուցիչների), վիրուսասպան ակտիվությամբ՝ մարդու բոլոր հայտնի ախտածին վիրուսների նկատմամբ (այդ թվում ընդերային, արտաընդերային հեպատիտներ Ա-ի, Բ-ի, Ց-ի, ՄԻԱՎ-վարակի, պոլիոմիելիտի հարուցիչների, Կոքսակի էնտերովիրուսների, ECHO, ռոտավիրուսների, նորովիրուսների, կորոնավիրուսների, «ատիպիկ թոքաբորբի» (SARS), հերպեսի, H5N1 «թռչնի» գրիպի, H1N1 «խոզի» գրիպի, մարդու գրիպի, պարագրիպի վիրուսների, ադենովիրուսների և այլն), սնկասպան ակտիվությամբ (այդ թվում Կանդիդա ցեղի ախտածին սնկերի, դերմատոֆիտների, բորբոսասնկերի նկատմամբ), սպորասպան ակտիվությամբ, օվոցիդ հատկություններով՝ էնտերոբիոզի հարուցիչների նկատմամբ: Պատրաստուկի հատկությունները թույլ են տալիս համակցել մեկ գործողության մեջ մշակվող մակերեսների և օբյեկտների լվացումը, ախտահանումը և դեզոդորացումը: Միջոցը նախատեսված է կանխարգելիչ, ընթացիկ և եզրափակիչ ախտահանման, մանրէազերծման, հիմնական մաքրում իրականացնելու, մակերեսների և օբյեկտների դեզինվազիայի և հելմինթազերծման համար: Միջոցը նախատեսված է մակերեսների (հատակ, պատեր, դռներ և այլն), կոշտ գույքի, այդ թվում բարուրասեղանների, կուվեզների, դրանց մասերի և հարմարանքների ախտահանման համար, կոռոզիակայուն նյութերից բժշկական նշանակության արտադրատեսակների (ներառյալ վիրաբուժական և ատամնաբուժական գործիքները, կոշտ և ճկուն էնդոսկոպները, դրանց կից գործիքները) նախամանրէազերծման մաքրման, ախտահանման և մանրէազերծման համար՝ ձեռքային եղանակով: Մատակարարման պահին ապրանքի պիտանիության ժամկետի առնվազն 2/3-ի առկայություն:

			Վտանգավորության աստիճանը՝ 3 - 4-րդ դաս: Ունի համապատասխանության սերտիֆիկատ (որակի հավաստագիր) և ՀՀ ԱՆ հաստատված մեթոդական հրահանգ՝ թիվ 2935-Լ:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Խաչպար ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՅԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/64 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	фирменное наименование	наименование производителя	технические характеристики
2			